ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2008-2010 ԹԹ.

ԸՍՏ ԲԱՆԿԵՐԻ 2008-10 ԹԹ. ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

Ի կատարումն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 11.11.2003թ. թիվ 385 որոշման՝ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացրել 2008-2010 թթ. հեռանկարային զարգացման ծրագրերը, որտեղ ներկայացված են իրենց կողմից մշակված ռազմավարություններն առաջիկա երեք տարիների համար, ինչպես նաև կատարված են հիմնական ֆինանսական ցուցանիշների կանխատեսումները:

Երևան - 2008

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՓԱՍՏԱՑԻ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2

2007թ. զարգացումները 2

Բանկերի սպասումները միջազգային զարգացումների, ՀՀ ներքին տնտեսության և ֆինանսաբանկային հատվածի վերաբերյալ 3

II ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 7

III ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ 2008-2010 ԹԹ. 8

Կապիտալի մակարդակի բարձրացում 8

Միջոցների ներգրավում 8

Միջոցների տեղաբաշխում 10

Բանկերի գործունեության ծրագրավորվող ֆինանսական արդյունքները 13

Բանկերի կառավարման համակարգ 16

Կաղրային քաղաքականություն 17

Մարկետինգային քաղաքականություն 18

Բանկերի տարածաշրջանային քաղաքականությունը 19

IV ՆՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ 20

V ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ 21

2007թ. զարգացումները 21

Կոնցենտրացումը պլանավորվող ժամանակահատվածում 21

VI ԱՄՓՈՓՈՒՄ 23

Հավելված 1. *ՀՀ բանկերի սպասումները Հայաստանի Հանրապետության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ*

Հավելված 2. *Բանկային համակարգի փաստացի և կանխատեսված հաշվեկշիռը*

Հավելված 3. *Բանկային համակարգի փաստացի և կանխատեսված եկամուտների ու ծախսերի կառուցվածքը*

Հավելված 4. *Բանկային համակարգի վարկային պորտֆելի փաստացի և կանխատեսված կառուցվածքը*

Հավելված 5. *Բանկային համակարգի կառավարման արդյունավետության միջինացված ցուցանիշներ*

Հավելված 6. *Բանկային ծառայություններից օգտվող հաճախորդների, նոր տեխնոլոգիաների ներդրման փաստացի և կանխատեսվող ցուցանիշներ*

Հավելված 7. *Բանկային համակարգում կոնցենտրացման չափերը*

Հավելված 8. *Բանկերի ՀՃԾ-ների ընդհանուր գնահատականները*

I ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ՓԱՍՏԱՅԻ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

2007թ. զարգացումները

Համաձայն ՀՀ առևտրային բանկերի հեռանկարային զարգացման ծրագրերի (այսուհետ ՀԶԾ)՝ ՀՀ-ում և միջազգային ասպարեզում տեղի ունեցած իրադարձություններից բանկերի գործունեության վրա ազդեցության տեսանկյունից 2007թ. առավել նշանակալի են եղել հետևյալ գործոնները.

- *LIBOR տոկոսադրույքի նվազում.* ՀՀ առևտրային բանկերի կողմից միջազգային կազմակերպություններից LIBOR տոկոսադրույքով ներգրավված միջոցների ծախսատարությունը նվազել է:
- *Միջազգային շուկաներում էներգակիրների և պարենային ապրանքների գների աճ.* միջազգային շուկաներում գների աճը հանգեցրել է ՀՀ-ում գնաճային ճնշումների, որն իր հերթին դրդել է ՀՀ բանկերին բարձրացնել ավանդների տոկոսադրույքները:
- *ԱՄՆ վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազում.* միջազգային շուկաներում հիփոթեքային վարկերի շուկայի ճգնաժամը և դրա հետևանքով ԱՄՆ ֆեդերալ ռեզերվային համակարգի վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցումը հանգեցրել է միջազգային ԱՄՆ ֆինանսական շուկայի տոկոսադրույքների համընդհանուր նվազեցման, ինչի հետևանքով նվազել է ՀՀ առևտրային բանկերի կողմից օտարերկրյա բանկերում տեղաբաշխված միջոցների եկամտաբերությունը:
- *Մրցակցության սրացում.* ՀՀ բանկային համակարգում հետզհետե սրվող մրցակցությունը, հատկապես, միջազգային հեղինակավոր կառույցների՝ ՀՀ ֆինանսական շուկայում ներկա գտնվելու պայմաններում, «ստիպում է» բանկերին նվազեցնել տոկոսային մարժաները:
- *Վարկավորման տոկոսադրույքի բարձրացման սահմանափակում.* վարկավորման տոկոսադրույքի՝ հաշվարկային տոկոսադրույքի կրկնապատիկից չգերազանցելու սահմանափակումը, ավանդի տոկոսադրույքի աճի պայմաններում նվազեցնում է բանկերի տոկոսային մարժան, ուստի նաև՝ շահութաբերության մակարդակը.
- *ՀՀ տնտեսական աճ, բնակչության եկամուտների ավելացում.* ՀՀ տնտեսության շարունակական աճն ու բնակչության ավելացող եկամուտները շարունակել են դրական ազդեցություն ունենալ ինչպես ՀՀ բանկերի ավանդների աճի վրա, այնպես էլ զգալիորեն աճ են ապահովել վարկավորման գործընթացում: 2007թ. ՀՀ բանկային համակարգի վրա ազդեցության տեսանկյունից, իրենց աճի տեմպերով հատկապես նշանակալի են տնտեսության ճյուղերից շինարարությունը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և ծառայությունների ոլորտը:
- *ՀՀ արտաքին առևտրաշրջանառության աճ.* արտաքին առևտրի ոլորտի հաճախորդների քանակի ավելացման և վերջիններիս գործունեության ծավալների աճի և կայունացման արդյունքում աճել է առևտրի ոլորտի վարկային պորտֆելը:
- *ՀՀ բանկային միջնորդության աճ.* ՀՀ բանկային համակարգի միջնորդության աճը՝ հանգեցնելով բանկերի ռեսուրսային բազայի ընդլայնման, վերջիններիս մոտ առաջացրել է ավելցուկային իրացվելիության բարձր մակարդակի խնդիր:
- *Բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեղմացումներ.* ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տնօրինման նորմատիվի դադարեցումը

և իրացվելիության նորմատիվների մեղմացումները դրական ազդեցություն են թողել ՀՀ առևտրային բանկերի գործունեության վրա:

- *ՀՀ դրամի արժեվորում ԱՄՆ դոլարի նկատմամբ.* ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի շարունակ արժեվորումը ՀՀ առևտրային բանկերի մոտ առաջացրել է արտարժույթի վերագնահատման վնասներ:
- *ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերության նվազում.* ՀՀ բանկային համակարգի ավելցուկային իրացվելիության բարձր մակարդակը հանգեցրել է ՀՀ պետական արժեթղթերի եկամտաբերության նվազման:
- *ՀՀ ԿԲ և կառավարության համատեղ միջոցառումների իրականացում՝ ուղղված անկանխիկ շրջանառության խրախուսմանը.* անկանխիկ շրջանառության խրախուսմանն ուղղված միջոցառումները և վճարահաշվարկային գործառնությունների զարգացումը նպաստել են բանկային պլաստիկ քարտերով իրականացվող գործառնությունների աճին:

Բանկերի սպասումները միջազգային զարգացումների, ՀՀ ներքին տնտեսության և ֆինանսաբանկային հատվածի վերաբերյալ

(կանխատեսված ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշները ներկայացված են Հավելված 1-ում)

Կանխատեսվող ժամանակաշրջանի համար ՀՀ առևտրային բանկերը որպես արտաքին միջավայրից, ներքին տնտեսությունից և ֆինանսական հատվածից բխող հնարավորություններ ու սպառնալիքներ տեսել են հետևյալ գործոնները.

Միջազգային գործոններ.

- *LIBOR տոկոսադրույքի ցածր մակարդակ.* LIBOR տոկոսադրույքի հետագա նվազումն ու ցածր մակարդակի պահպանումը թույլ կտա ՀՀ առևտրային բանկերին նշված տոկոսադրույքով ներգրավված միջոցների ծախսատարության նվազման արդյունքում որոշ չափով ավելացնել տոկոսային մարժան: Այնուամենայնիվ, մեկ բանկի մոտ առկա է նաև LIBOR տոկոսադրույքի աճի ուղղությամբ կանխատեսում:
- *ԱՄՆ դոլար/եվրո փոխարժեքի հետագա արժեզրկում.* ԱՄՆ դոլարի հետագա արժեզրկումը եվրոյի նկատմամբ, ներազդելով ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի վրա, զգալի արտարժութային ռիսկ կպարունակի բաց արտարժութային դիրք ունեցող բանկերի համար:
- *Միջազգային շուկաներում գների մակարդակի աճ.* միջազգային շուկաներում գների աճը կհանգեցնի ՀՀ-ում գների մակարդակի աճի, որն իր հերթին «կստիպի» ՀՀ բանկերին բարձրացնել ավանդների տոկոսադրույքները, ուստի և կրճատել տոկոսային մարժան և շահութաբերության մակարդակը:
- *Համաշխարհային հումքային ապրանքների գների նվազման ռիսկ.* համաշխարհային տնտեսության աճի տեմպերի նվազման պայմաններում հումքային ապրանքների գների նվազման ռիսկը կարող է վտանգել հանքարդյունահանման ոլորտի վարկառուների վարկունակությունը:

- *Միջազգային ֆինանսական շուկաներում տոկոսադրույքների նվազման միտումներ.* միջազգային շուկաներում տոկոսադրույքների համընդհանուր նվազեցման միումները կհանգեցնեն ՀՀ առևտրային բանկերի՝ օտարերկրյա բանկերում տեղաբաշխված միջոցների եկամտաբերության նվազման:
- *Եվրամիության երկրներ, ԱՄՆ-ի և Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերությունների զարգացում և տնտեսական կապերի աշխուժացում.* նշված երկրների զարգացման պայմաններում կանխատեսվում է վերջիններիս հետ գործընկերային հարաբերություններ ունեցող հաճախորդների, բանկերի սեփականատերերի գործունեության ակտիվացում, ծավալների մեծացում, ուստի և բանկերի միջոցների ներգրավման ծավալների, վարկավորման, ինչպես նաև դրամական փոխանցումների ծավալների աճ:

<u>ՀՀ տնտեսության և ֆինանսաբանկային հատվածի գործոններ.</u>

- *ՀՀ շարունակական տնտեսական աճ, բնակչության եկամուտների ավելացում.* ՀՀ տնտեսության շարունակվող աճն (հատկապես, արդյունաբերության, շինարարության ճյուղերի և ծառայությունների ոլորտի) ու բնակչության եկամուտների (այդ թվում՝ արտերկրից ստացվող տրանսֆերտների հաշվին) բարձրացումը կնպաստի բնակչության խնայողությունների մակարդակի աճին, ուստի և ՀՀ բանկային միջնորդության հետագա ընդլայնմանը:
- *Բնակչության վստահության հետագա աճ.* ՀՀ բանկային համակարգի նկատմամբ բնակչության վստահության տարեցտարի ամրապնդումը ավելացնում է բանկերի հաճախորդների բազան:
- *ՀՀ ֆինանսական համակարգում գործող ինստիտուտների զարգացում և նորերի առաջացում.* ՀՀ ֆինանսական համակարգում արդեն իսկ գոյություն ունեցող, ինչպես նաև նոր ստեղծվող մի շարք ինստիտուտներ էականորեն նպաստում են ՀՀ առևտրային բանկերի գործունեության տարբեր ոլորտների զարգացմանն ու արդյունավետությանը, մասնավորապես
    - ֆիզիկական անձանց ավանդերի հատուցման երաշխավորման համակարգը,
    - վարկային ռեգիստրը և վարկային բյուրոները,
    - ՀՀ ԿԲ կողմից ձեռնարկությունների վարկանշման համակարգը,
    - «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը, շվեդական OMX խմբի մուտքը հայաստանյան ֆինանսական շուկա,
    - սքորինգային համակարգերի ներդրումը,
    - ապահովագրական շուկայի զարգացումը,
    - ՀՀ ԿԲ կողմից մասնաճյուղերի գրանցման ընթացակարգի պարզեցում:
- *ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեք.* բանկերի կողմից հիմնականում կանխատեսվում է ԱՄՆ դոլար/դրամ փոխարժեքի կայունացում, որը կհանգեցնի բաց արտարժութային դիրք ունեցող բանկերի ակտիվների և

պարտավորությունների կառուցվածքի կանխատեսելիության: Միաժամանակ, որոշ բանկեր կանխատեսում են ազգային արժույթի արժեվորման շարունակականություն:

- *ՀՀ ֆինանսական շուկայում տոկոսադրույքների մակարդակ.* բանկերի կողմից կանխատեսվում է ՀՀ ֆինանսական շուկայում տոկոսադրույքների աննշան փոփոխություն, որը սակայն կհանգեցնի ՀՀ առևտրային բանկերի զուտ տոկոսային մարժայի նվազման, ուստի և շահութաբերության մակարդակի անկման:
- *ՀՀ ԿԲ և կառավարության կողմից իրականացվող համատեղ միջոցառումներ՝ ուղղված անկանխիկ շրջանառության խրախուսմանը.* անկանխիկ շրջանառության խրախուսմանն ուղղված միջոցառումները կշարունակեն խրախուսել վճարահաշվարկային գործառնությունների զարգացումն ու նպաստել բանկային պլաստիկ քարտերով իրականացվող գործառնությունների աճին:
- *ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային քաղաքականության գործիքակազմի կիրառում.* ՀՀ բանկային համակարգի ավելցուկային իրացվելիության դուրսքաշման նպատակով ՀՀ ԿԲ կողմից դրամավարկային գործիքակազմի օգտագործում՝ ՀՀ առևտրային բանկերի համար շահավետ պայմաններով, որը ՀՀ առևտրային բանկերի համար եկամտի լրացուցիչ աղբյուր կհանդիսանա.
- *ՀՀ տնտեսության որոշ ճյուղերի շահութաբերության նվազումը.* տնտեսության որոշ ճյուղերի շահութաբերության մակարդակի նվազումը, հանգեցնելով ճյուղի ձեռնարկությունների թանկ վարկային ռեսուրսների նկատմամբ պահանջարկի նվազման, կդրդի բանկերին նվազեցնել վարկավորման տոկոսադրույքները:
- *ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերության հետագա նվազում.* ՀՀ պետական արժեթղթերի եկամտաբերությունը կշարունակի նվազել՝ պայմանավորված ՀՀ բանկային համակարգի ավելցուկային իրացվելիության բարձր մակարդակի հետ: Այնուամենայնիվ, որոշ բանկեր կանխատեսում են պետական պարտատոմսերի եկամտաբերության աճ՝ պայմանավորված մի շարք ոչ ֆինանսական կազմակերպությունների կողմից սեփական պարտատոմսերի թողարկման գործընթացի ակտիվացմամբ:
- *Սպառողական վարկերը դրամով տրամադրելու ՀՀ ԿԲ պահանջը.* ՀՀ առևտրային բանկերի կողմից սպառողական վարկերի բացառապես դրամով տրամադրման պահանջը դրամով միջոցների ներգրավման սահմանափակության պայմաններում բանկերի մոտ արժութային անհամապատասխանության զգալի ռիսկեր կառաջացնի:
- *Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի շրջանակներում իրականացվող միջոցառումներ.* ՀՀ ԿԲ կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի շրջանակներում բանկերի նկատմամբ սահմանված պահանջների իրականացումը վերջիններիցս կշարունակի պահանջել զգալի ֆինանսական, մարդկային և ժամանակային ռեսուրսներ:

- *Քաղաքական ռիսկի աճ.* ՀՀ նախագահական ընտրությունների հետ կապված բանկերի ֆինանսական հոսքերի անկայունություն, որի հետևանքով վերջիններիս մոտ կառաջանա լրացուցիչ իրացվելիություն ապահովելու պահանջ:
- *ՀՀ բանկային համակարգում մրցակցության հետագա աճ.* մրցակցության հետզհետե սրումը, վերոնշյալ մի շարք գործոնների առկայության պայմաններում, բացասաբար կանդրադառնա բանկերի տոկոսային մարժայի, հետևաբար նաև՝ շահութաբերության մակարդակի վրա:
- *Ստվերային տնտեսության բարձր մակարդակ.* ստվերային տնտեսության դեռևս բավականին բարձր մակարդակը դժվարություններ է ստեղծում վարկային ռիսկի գնահատման տեսանկյունից:
- *ՀՀ ԿԲ կողմից Բազել 2-ի ներդրման միջոցառումների իրականացում.* Բազել 2-ի ներդրման շրջանակներում վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի ներառումը բանկերի կապիտալի հաշվարկի մեջ դրականորեն կանդրադառնա ՀՀ բանկերի ռիսկայնության մակարդակի վրա (բանկերի առջև խնդիր կդրվի անձնակազմը համալրել ռիսկերի վերլուծությամբ զբաղվող աշխատակիցներով):

II ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2008-2010թթ. հեռանկարային զարգացման ծրագրերով ՀՀ առևտրային բանկերը հիմնականում շարունակել են նախկինում որդեգրած իրենց ռազմավարությունները, և առաջիկա երեք տարիների համար սահմանել են հետևյալ նպատակները.

- ակտիվների աճ,
- վարկային պորտֆելի աճ,
- կապիտալի աճ,
- ներգրավված միջոցների աճ,
- որևէ հատվածում կամ որևէ ցուցանիշով առաջատար դիրքի գրավում/պահպանում,
- շահութաբերության նպատակային ցուցանիշների աճ կամ պահպանում,
- ցածր ռիսկային վարկային պորտֆելի ապահովում,
- պլաստիկ քարտերով գործառնությունների աճ, վճարահաշվարկային ծառայությունների զարգացում,
- մատուցվող ծառայությունների ցանկի և ծավալների աճ,
- ֆինանսական հատվածում նոր սեգմենտների գրավում և նոր գործիքների ներդրում,
- նոր պրոդուկտների ներդրում,
- ապրանքանիշի առաջմղում ՀՀ շուկայում,
- համագործակցություն միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ,
- հաճախորդների շրջանակների ընդլայնում,
- բանկի գործունեության աշխարհագրության ընդլայնում, նոր մասնաճյուղերի հիմնադրում,
- մասնաճյուղերի կողմից մատուցվող ծառայությունների ցանկի ընդլայնում,
- սպասարկման որակի բարելավում, բարձրորակ ծառայությունների մատուցում,
- կառավարման որակի, կառավարչական գործընթացների զարգացում,
- կիրառվող տեխնիկական միջոցների և տեխնոլոգիաների արդիականացում,
- կադրային համակարգի զարգացում,
- միջազգային ռեյտինգային կազմակերպությունից վարկանիշի ստացում:

III ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ 2008-2010 ԹԹ.


Կապիտալի մակարդակի բարձրացում

(տե՛ս Հավելված 2)

Ըստ ՀՀ առևտրային բանկերի կանխատեսումների՝ ՀՀ բանկային համակարգի կապիտալի մակարդակը 31.12.2007-31.12.2010թթ. (այսուհետ 2008-2010թթ) ժամանակահատվածում աճելու է մոտ 114.4%-ով (տարեկան միջին աճը՝ 29.2%): Արդյունքում ՀՀ բանկային համակարգի կապիտալը 2010թ. վերջին կկազմի 366.8 մլրդ դրամ՝ ի համեմատություն 2007թ. վերջի 171.1 մլրդ դրամի:

Քննարկվող ժամանակահատվածում ՀՀ բոլոր առևտրային բանկերը նախատեսում են կապիտալի մակարդակի բարձրացում իրականացնել ներքին աղբյուրների հաշվին: Միաժամանակ 12 բանկ, ի լրումն շահույթի կապիտալացման՝ նախատեսում են կապիտալի համալրում իրականացնել նաև կանոնադրական կապիտալի աճի հաշվին, ընդ որում բանկերից 7-ը կանոնադրական կապիտալ կապահովեն ի հաշիվ ոչ ռեզիդենտների:

Բանկային համակարգի կապիտալի կանխատեսվող կառուցվածք (հազար ՀՀ դրամ)




Միջոցների ներգրավում

(տե՛ս Հավելված 2)


Ըստ ՀՀ առևտրային բանկերի ՀՋԾ-ների՝ 2008-2010թթ. ընթացքում կանխատեսվում է բանկային համակարգի պարտավորությունների 160.3% աճ՝ տարեկան աճելով միջինը 37.6%-ով: Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2008թ. վերջին կկազմեն 848.5 մլրդ դրամ, իսկ 2010թ՝ 1611.7 մլրդ դրամ:

Ըստ կանխատեսումների՝ ցպահանջ ավանդների տեսակարար կիռը ընդհանուր ավանդներում փոքր-ինչ կնվազի: 31.12.2010թ. ցպահանջ/ժամկետային ավանդների հարաբերակցությունը կկազմի 52/48՝ ի համեմատություն 31.12.2007թ. 54/46 հարաբերակցության: Ներգրավված միջոցների կառուցվածքում 2010թ., ինչպես և 2007թ. վերջին, շարունակելու են գերակշռող լինել իրավաբանական անձանց ցպահանջ հաշիվները, որոնք, տարեկան աճելով միջինը 36.9%-ով, 2010թ. կկազմեն ընդհանուր պարտավորությունների 23%-ը (2007թ. վերջի՝ 25%-ի համեմատ): Ֆիզիկական անձանց ցպահանջ միջոցների տարեկան միջին աճը կկազմի 43.4%՝ 2010թ.-ին կազմելով ընդհանուր պարտավորությունների 12% (2007թ.՝ 11%):

Ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրաված միջոցների կանխատեսվող կառուցվածքը (հազար ՀՀ դրամ)




Ցպահանջ և ժամկետային միջոցների կանխատեսվող կառուցվածք




Ժամկետային ավանդների կառուցվածքում իրավաբանական անձանց ժամկետային ավանդների տեսակարար կշիռը ընդհանուր պարտավորություններում 2010թ. վերջի դրությամբ կաճի՝ կազմելով 11% (2007թ.-ի 10%-ի համեմատ): Կաճի նաև ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների տեսակարար կշիռը՝ 2010թ. կազմելով 24% (2007թ.-ի 21%-ի համեմատ):

Ըստ բանկերի կանխատեսումների՝ դիտարկվող ժամանակահատվածում ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների միջին տարեկան աճը կկազմի 43.0%:

Քննարկվող ժամանակահատվածում բանկերը նախատեսում են այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների զգալի աճ ապահովել՝ 311.0%, որի արդյունքում վերջիններիս տեսակարար կշիռը ընդհանուր պարտավորությունների մեջ 2007թ. 7%-ից 2010թ. հասնելու է 11%-ի: Ընդ որում, նախատեսված աճը կանխատեսվում է հիմնականում ի հաշիվ ոչ ռեզիդենտներից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների:





1. Թղթակցային հաշիվներ
2. Ֆիզիկական անձանց ցպահանջ միջոցներ և հաշիվներ
3. Իրավաբանական անձանց և հիմնարկների ցպահանջ միջոցներ և հաշիվներ
4. Պարտավորություններ գանձապետարանի նկատմամբ
5. Բանկերից և ՀՀ ԿԲ-ից ներգրավված ավանդներ և վարկեր
6. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ
7. Իրավաբանական անձանց և հիմնարկների ժամկետային ավանդներ
8. Այլ պարտավորություններ

Միջոցների տեղաբաշխում

(տե՛ս Հավելված 2 և 4)

Ըստ բանկերի ՀՋԾ-ների՝ կանխատեսվում է դիտարկվող 3 տարիների ընթացքում արձանագրել բանկային համակարգի ակտիվների 150.3%-ով աճ (տարեկան միջինը՝ 35.8% աճ)՝ 31.12.2010թ. դրությամբ կազմելով 1978.5 մլրդ դրամ:

Ըստ առանձին ակտիվային հոդվածների.


Ակտիվների մեջ ամենամեծ աճը նախատեսվում է տնտեսությանը տրամադրված վարկերի հոդվածում. 2008-2010թթ. աճը կկազմի 205.5%՝ տարեկան միջինը աճելով 45.5%-ով: 2010թ. վարկերի ծավալը ըստ կանխատեսումների կկազմի 1243.7 մլրդ դրամ: Արդյունքում, ՀՀ բանկային համակարգի վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում կաճի՝ 2010թ տարեվերջին կազմելով ընդհանուր ակտիվների 63%-ը (2007թ. տարեվերջին՝ 53%):


Կապիտալ/ակտիվներ լևերեջի ցուցանիշը կանխատեսվող տարիներին կնվազի. 2008թ. կկազմի 22.2%, 2009թ.՝20.7%, 2010թ,՝18.5%՝2007թ.-ի 21.6%-ի համեմատ:

2008-2010թթ. նախատեսվում է դրամարկղում կանխիկի աճ 99.9%-ով՝ ժամանակաշրջանի վերջին կազմելով 81.9 մլրդ դրամ:

Բանկերի կողմից ՀՀ պետական պարտատոմսերում ներդրումները կանխատեսվող ժամանակահատվածի համար կաճեն 87.3%-ով՝ ժամանակաշրջանի վերջում կազմելով 181.0 մլրդ դրամ: Նախատեսվում է նաև կորպորատիվ արժեթղթերի պորտֆելի զգալի աճ՝ 124.6%-ով՝ 2010թ. վերջին կազելով 8.7 մլրդ դրամ: Այնուամենայնիվ, ոչ պետական արժեթղթերի տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում չի փոխվի, և կմնա մինչև 1%-ի սահմաններում: Պետական արժեթղթերի տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում կնվազի և 2010թ.-ի վերջին կկազմի 9%՝ ի հակադրություն 2007թ.-ի վերջի 12%-ի:


Ըստ կանխատեսումների՝ ՀՀ բանկային համակարգի ակտիվների կառուցվածքում հատկանշական է ֆակտորինգային գործառնությունների աննախադեպ աճը (600%-ով), որի արդյունքում ֆակտորինգային գործառնությունների ծավալը 2010թ. վերջում կկազմի 55.5 մլրդ դրամ, իսկ տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում՝ 3%՝ ի հակադրություն 2007թ.-ի 1%-ի:







1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում և բանկերում
3. Բանկերում և այլ ֆինանսավարկային կազմակերպություններում տեղաբաշխված դեպոզիտներ և վարկեր
4. Վարկեր տնտեսությանը
5. Պետական արժեթղթեր
6. Այլ արժեթղթեր
7. Լիզինգ և ֆակտորինգ
8. Հիմնական միջոցներ
9. Այլ ակտիվներ

2008-2010թթ. վարկային պորտֆելի աճը հիմնականում պայմանավորված է սպառողական վարկերի (վարկային պորտֆելի աճի 29.4%-ը), առևտրի ոլորտի (20.9%), հիփոթեքային (16.3%) և արդյունաբերության ճյուղի (12.2%) վարկերի աճերով:








1. Արդյունաբերություն
2. Գյուղատնտեսություն
3. Շինարարություն
4. Տրանսպորտ և կապ
5. Առևտուր
6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ
7. Ֆինանսական հատված
8. Սպառողական վարկեր
9. Անշարժ գույքի ձեռքբերման նպատակով
10. Տնտեսության այլ ճյուղեր

ՀՀ բանկային համակարգի վարկային պորտֆելի կառուցվածքը վերոնշյալ աճերի արդյունքում 2010թ., 2007թ.-ի համեմատ, գրեթե փոփոխությունների չի ենթարկվի. վարկային պորտֆելում կշարունակեն գերակշռել սպառողական վարկերը՝ 29%, առևտրի ոլորտի


վարկերը՝ 21%: Դիտարկվող ժամանակահատվածում հիփոթեքային վարկերի տեսակարար կշիռը փոքր-ինչ կաճի՝ 12%-ից հասնելով մինչև 15%:

2008-2010թթ. ընթացքում արդյունաբերության ոլորտին տրամադրված վարկերը կաճեն 197.4%-ով և ժամանակաշրջանի վերջին կկազմեն 157.1 մլրդ դրամ: Ըստ կանխատեսումների՝ արդյունաբերության ճյուղի տեսակարար կշիռը ընդհանուր վարկային պորտֆելում գրեթե չի փոփոխվի՝ պահպանելով 13% մասնաբաժինը: Արդյունաբերության ճյուղի կառուցվածքը 2008-2010թթ. աճերի արդյունքում ևս մեծ փոփոխությունների չի ենթարկվի:

Արդյունաբերության ճյուղի վարկերի կառուցվածքը առ 31.12.2007



Արդյունաբերության ճյուղի վարկերի կանխատեսվող կառուցվածքը առ 31.12.2010




1. հանքագործություն
2. էներգետիկա
3. սննդի
4. թեթև
5. քիմիական
6. շինանյութերի
7. թանկարժեք իրերի
8. մետալուրգիա
9. մեքենաշինական և էլեկտրատեխնիկական
10. արդյունաբերության այլ ճյուղեր

Բանկերի գործունեության ծրագրավորվող ֆինանսական արդյունքները

(տե՛ս Հավելվածներ 2 և 3)

Համաձայն 2008-2010թթ. բանկերի ՀՋԾ-ների՝ ծրագրվող ժամանակահատվածում ՀՀ բանկային համակարգի եկամուտների ու ծախսերի կառուցվածքները որոշակի փոփոխությունների կենթարկվեն: Բանկային համակարգի ընդհանուր եկամուտների մեջ կավելանա տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը՝ 2007թ.-ի 67%-ից 2010թ. հասնելով 75%-ի: Բանկային համակարգի ծախսային կառուցվածքը ևս կփոփոխվի. տոկոսային ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ ևս կավելանա և 2010թ. կկազմի 42%՝ ի հակադրություն 2007թ.-ի 30%-ի:

Բանկային համակարգի եկամուտների և ծախսերի աճի կանխատեսվող դինամիկա (հազար ՀՀ դրամ)



Ըստ բանկերի կանխատեսումների՝ 2008-2010թթ. ընթացքում բանկային համակարգի տոկոսային եկամուտները կաճեն 175.1%-ով (տարեկան միջին աճը՝ 40.1%) և 2010թ. կկազմեն 166.3 մլրդ դրամ:

Բանկային համակարգի տոկոսային ծախսերը կանխատեսվող տարիների համար աճելու են 216.4%-ով (տարեկան միջին աճը՝ 47.0%)՝ 2010թ. կազմելով 57.6 մլրդ դրամ:

2008-2010թթ. բանկային համակարգի զուտ տոկոսային եկամուտները կանխատեսվում է, որ կաճեն 157.2%-ով (տարեկան միջինը՝ 37.1%-ով)՝ 2010թ. վերջին կազմելով 108.6 մլրդ դրամ:


Ոչ տոկոսային եկամուտները կանխատեսվում է, որ կաճեն 85.9%-ով (տարեկան աճը՝ 23.1%-ով) և 2010թ. կկազմեն 55.8 մլրդ դրամ:

Կանխատեսվող ժամանակաշրջանի ընթացքում ՀՀ բանկային համակարգի ոչ տոկոսային ծախսերը կաճեն 91.1%-ով (տարեկան 24.1%-ով) և 2010թ. ոչ տոկոսային ծախսերը կկազմեն մոտ 79.6 մլրդ դրամ: Բանկային համակարգի ոչ տոկոսային ծախսերի աճը պայմանավորող հիմնական գործոնը կհանդիսանան աշխատավարձի ուղղությամբ կատարվող ծախսերը:

Զուտ ոչ տոկոսային եկամուտները 2008-2010թթ. կփոփոխվեն տարեկան միջինը 28.4%-ով (2008-2010թթ.՝ 104.7%-ով): Արդյունքում, 2010թ. զուտ ոչ տոկոսային եկամուտները կկազմեն բացասական 23.8 մլրդ դրամ:

Ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին զուտ մասհանումները կանխատեսվող տարիներին կաճեն տարեկան միջինը 24.0%-ով (2008-2010թթ.՝ 81.8%-ով):

Բանկային համակարգի եկամուտների և ծախսերի կանխատեսվող կառուցվածք



Կանխատեսվող երեք տարիների համար բանկային համակարգի «զուտ մասհանումներ/ համախառն ակտիվներ» ցուցանիշը կկազմի 0.4% (2007թ.՝ 0.5%):

2008-2010թթ. բանկային համակարգի զուտ շահույթը, կանխատեսվում է, որ կաճի միջին տարեկան 43.8-ով (2008-2010թթ.՝ 196.2%-ով) և կկազմի 61.7 մլրդ դրամ:

Ըստ կանխատեսումների՝ բանկերի զուտ տոկոսային մարժան[1] 2008-2010թթ. համար կտատանվի 5.2%-5.5% (2007թ.՝ 5.3%):

Բանկերի կառավարման տնտեսական արդյունավետությունը (տե՛ս Հավելված 5) բնութագրող «զուտ շահույթ/համախառն ծախսեր» ցուցանիշը 2008-2010թթ. համար կտատանվի 35%-45% միջակայքում (2007թ.՝ 35%):

Բանկերի ակտիվների շահութաբերությունը բնութագրող «զուտ շահույթ/համախառն ակտիվներ» ցուցանիշը (ROA) 2008-2010թթ. համար կտատանվի 2.6%-3.1%՝ ի համեմատություն 2007թ. 2.6%-ի: Կապիտալի շահութաբերությունը բնութագրող «զուտ շահույթ/ կանոնադրական կապիտալ» (ROE) ցուցանիշը կանխատեսվում է, որ կտատանվի 17.5%-34.1% միջակայքում՝ ի հակադրություն 2007թ. 17.9%-ի:

Կանխատեսվող երեք տարիների միջին արդյունքներով՝ ըստ ROA-ի մեծության բանկերը կարելի է բաժանել մի քանի խմբի՝

I. 3.5% - ից բարձր ROA ունեցող բանկեր՝ 6 բանկ,

II. 2.5% - 3.5% ROA ունեցող բանկեր՝ 8 բանկ,

III. 2.5% - ից ցածր ROA ունեցող բանկեր՝ 8 բանկ:

Ըստ ROE-ի մեծության՝

I. 20% - ից բարձր ROE ունեցող բանկեր՝ 4 բանկ,

II. 15% - 20% ROE ունեցող բանկեր՝ 2 բանկ,

III. 10% - 15% ROE ունեցող բանկեր՝ 10 բանկ,

IV. 10% - ից ցածր ROE ունեցող բանկեր՝ 6 բանկ:

[1] զուտ տոկոսային եկամուտ/ակտիվներ

<u>Բանկերի կառավարման համակարգ</u>

Ըստ ՀՀԶԾ-ների՝ ՀՀ առևտրային բանկերը նախատեսում են կառավարման համակարգերի կատարելագործման հետևյալ միջոցառումները.

- որակի կառավարման համակարգի ներդրում,
- տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման համակարգերում նոր ստանդարտների (COBIT) ներդրում,
- կազմակերպական կառուցվածքների բարեփոխումներ, առավել ճկուն համակարգերի ներդրում,
- աշխատակիցների ֆունկցիաների բաժանում, լիազորությունների և պատասխանատվության հստակեցում,
- կորպորատիվ կառավարման սկզբունքների ապահովում,
- ներքին հսկողության համակարգերի կատարելագործում, ներքին կանոնակարգում,
- ռիսկերի կառավարման նպատակով բանկային գործընթացների ներքին կանոնակարգում:

2008-2010թթ. հեռանկարային զարգացման ծրագրերով՝ ՀՀ առևտրային բանկերը կարևորել են ստորև բերված աղյուսակում ներկայացված ռիսկերը՝ նշելով դրանց կառավարման իրենց կողմից կիրառվող մեթոդները.

Ռիսկ	***Կառավարման մեթոդ***
Վարկային ռիսկ	• «Հատկացումներ պահուստներին/ վարկեր» սահմանաչափերի սահմանում և պահպանում • Վարկային ներդրումների դիվերսիֆիկացիա • Գրավադրված ակտիվների ապահովագրում • Վարկային սահմանաչափերի սահմանում • Լրացուցիչ երաշխավորությունների ստացում • Վարկավորման գործընթացի կանոնակարգում՝ ներքին իրավական ակտերի ընդունման միջոցով • Ըստ ոլորտների և ըստ գործիքների սահմանաչափերի սահմանում • Սթրեսս-թեստերի կիրառում
Իրացվելիության ռիսկ	• Անհրաժեշտ մակարդակի բարձր իրացվելի եկամտաբեր ակտիվների ապահովում • Դրամական հոսքերի կանխատեսում • Ճեղքվածքի (GAP) վերլուծություն • Սթրեսս-թեստերի կիրառում • Աննախադեպ իրավիճակների ծրագրի ձևավորում • Դյուրացիայի մեթոդի կիրառում
Խոշոր հաճախորդներից կախվածության ռիսկ	• Միջոցների դիվերսիֆիկացիա
Արժութային ռիսկ	• Փակ արտարժութային դիրքի պահպանում (բաց դիրքի սահմանափակում) • Արտարժութային ածանցյալ գործիքների (ֆորվարդ, օպցիոն)

	կիրառում, հեջավորում • Ստրես թեսթերի կիրառում
Տոկոսադրույքի ռիսկ	• Սպրեդի, մարժայի և ճեղքվածքի վերլուծություն • Դյուրացիայի մեթոդի կիրառում • Ստրես թեսթերի կիրառում
Գործառնական ռիսկ	• Ներքին կանոնակարգում՝ բանկի ստորաբաժանումների գործունեության կանոնակարգման միջոցով
Փողերի լվացման ռիսկը	• Ներքին կանոնակարգում՝ ներքին իրավական ակտերի ընդունման միջոցով
Մրցակցության ռիսկ	• Շուկայի և մրցակիցների ուսումնասիրություններ • Մրցունակ դիրքերի ապահովում
Իրավական ռիսկ	• Նախատեսվող օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտերի փոփոխությունների գործընթացներին ակտիվ մասնակցություն • Ներքին իրավական ակտերի համապատասխանեցում օրենսդրական փոփոխություններին • Ստրես թեսթերի կիրառում
Երկրի ռիսկ	• Ռիսկի աղբյուր հանդիսացող երկրներում գործառնությունների սահմանափակում • Գործառնությունների դիվերսիֆիկացիա՝ ըստ երկրների

<u>Կադրային քաղաքականություն</u>

Տարեցտարի ավելի կարևորելով կադրային քաղաքականության նշանակությունը բանկային գործունեության արդյունավետության համար՝ ՀՀ առևտրային բանկերը պլանավորվող ժամանակահատվածում կադրային քաղաքականության տեսանկյունից նախատեսել են հետևյալ միջոցառումները.

- կադրերի ուսուցում և վերապատրաստում՝ ինչպես ՀՀ տարածքում (այդ թվում՝ բանկերի կողմից հիմնած ուսումնական հաստատություններում), այնպես էլ՝ արտասահմանում,
- բանկի ղեկավարների և փորձված աշխատակիցների կողմից սեմինարների, դասընթացների կազմակերպում բանկի կրտսեր աշխատակիցների կրթման համար,
- օտարերկրյա գործընկերների հետ փորձի փոխանակում,
- աշխատակիցների գիտելիքների և համապատասխանության ստուգման նպատակով պարբերաբար ատեստացիաների անցկացում, թեսթավորում, աշխատակիցների գնահատման այլ համակարգերի ներդրում,
- աշխատակիցների խրախուսում օտար լեզվի (անգլերեն) իմացության և այդ նպատակով դասընթացների կազմակերպում,
- լավագույն աշխատակիցների բացահայտման մրցույթների կազմակերպում,
- երիտասարդ մասնագետների ընտրություն՝ վերջիններիս բանկում կազմակերպված դասընթացներին մասնակցության և դրանց ընթացքում լավագույն արդյունքների ցուցաբերման միջոցով, ինչպես նաև համագործակցելով ԲՈՒՀ-երի հետ,
- մրցութային եղանակով նոր աշխատակիցների ներգրավում,
- մասնագիտական որակավորման քննություններ հանձնելու և որակավորման վկայականներ ստանալու պարագայում՝ աշխատակիցների խրախուսում,

- աշխատակիցների խրախուսում՝ սոցիալական և կորպորատիվ միջոցառումների կազմակերպման միջոցով, աշխատակիցների կորպորատիվ ոգու բարձրացման միջոցառումների կազմակերպում,
- աշխատակիցների վարձատրության և խրախուսման համակարգերի կատարելագործում, բոնուսային համակարգերի ներդրում:

Դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում ՀՀ բանկային համակարգի աշխատակիցների թվաքանակը պլանավորվում է, որ կաճի 50.1%-ով կամ 3232 աշխատողով (տարեկան՝ 14.6%-ով)՝ 2010թ. վերջին կազմելով 9682 աշխատակից: Ընդ որում, վարչական աշխատակիցների թվաքանակը կաճի 52.5%-ով կամ 2492 աշխատակցով՝ 2010թ. վերջին կազմելով 7239 աշխատակից *(տե՛ս Հավելված 5)*:

Դիտարկվող ժամանակահատվածի ընթացքում անձնակազմի կառուցվածքի արդյունավետությունը բնութագրող՝ «բանկային համակարգի վարչական աշխատողների թիվ/սպասարկող աշխատակիցների թիվ» հարաբերակցության ցուցանիշը փոքր-ինչ կաճի՝ կանխատեսվող երեք տարիների համար կազմելով 3.0՝ 2007թ.-ի 2.6-ի փոխարեն:

Կառավարման արդյունավետության՝ «զուտ շահույթ/աշխատակիցների թիվ» ցուցանիշը 2010թ.՝ 2007թ.-ի համեմատ կաճի 3142 հազար դրամով՝ ժամանակաշրջանի վերջում կազմելով 6369 հազար դրամ:

Բանկերի համար կադրերի ուսուցման և վերապատրաստման ուղղությամբ իրականացվող ներդրումները բնութագրող «ուսուցման ծախսեր/վարչական աշխատողների թիվ» ցուցանիշը կաճի 27 հազար դրամով՝ 2010թ. վերջին կազմելով տարեկան 69 հազար դրամ:

Բանկերի վարձատրությունը բնութագրող՝ «վարչական աշխատողների աշխատավարձ և այլ վճարումներ/վարչական աշխատողների թիվ» ցուցանիշը կանխատեսվող երեք տարիների ընթացքում կաճի 1.5 մլն դրամով՝ 2010թ. վերջին կազմելով տարեկան 3.6 մլն դրամ:

<u>Մարկետինգային քաղաքականություն</u>

Նոր հաճախորդների ներգրավման և հեղինակության բարձրացման գործընթացում կարևորելով մարքետինգային միջոցառումների դերը՝ ՀՀ առևտրային բանկերը 2008-2010թթ. համար նախատեսել են իրականացնել հետևյալ միջոցառումները.

- գովազդային արշավներ (հեռուստագովազդ, մամուլում գովազդի տեղադրում, արտաքին գովազդ (գովազդային վահանակներով)),
- վաճառքի խթանում,
- հասարակայնության հետ կապեր (PR),
- CRM համակարգի կիրառում,
- ՋԼՄ-ներով ակցիաների իրականացում,
- ճկուն սակագնային քաղաքականության կիրառում,
- նոր ծառայությունների մշակմանն ու ներդրմանն ուղղված աշխատանքներ,
- բանկի վարկանիշի ձևավորման և կայացման ուղղությամբ աշխատանքներ,
- շուկայական հետազոտությունների իրականացում,
- ինտերնետային կայքի թարմացում:

Նախատեսվող գովազդային միջոցառումները հիմնականում ունենալու են հետևյալ ուղղությունները.

- ավանդների ներգրավում,
- բանկի հեղինակության, իմիջի գովազդ,
- պլաստիկ քարտերով գործառնություններ,
- նոր բանկային ծառայություններ:

Բանկերի կողմից իրականացվելիք շուկայական հետազոտությունները ուղղված են լինելու.

- մրցակիցների սակագների, քաղաքականության բացահայտում,
- մրցակիցների նկատմամբ առավելությունների և թերությունների բացահայտում,
- նպատակային շուկաների վերլուծություն, պոտենցյալ հաճախորդների բացահայտում,
- հաճախորդների կարիքների և սպասումների ուսումնասիրություն,
- բանկային համակարգում բանկերի մասնաբաժինների բացահայտում:

Այնուամենայնիվ, բանկային համակարգի գովազդային ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում, ինչպես և նախորդ տարի, կնվազի. բանկային համակարգի վաճառքի խթանման՝ «գովազդի ծախսեր/ընդհանուր ծախսեր» ցուցանիշը 2010թ.՝ 2007թ.-ի նկատմամբ կանխատեսվում է, որ կնվազի 3.6%-ից մինչև 2.8% (Հավելված 5):

<u>Բանկերի տարածաշրջանային քաղաքականությունը</u>

Ըստ ՀՋԾ-ների՝ բանկերի զգալի մեծամասնությունը նախատեսել է տարածքային ընդլայնման քաղաքականություն՝ մասնաճյուղեր բացելով ինչպես Երևանում, այնպես էլ՝ ՀՀ մարզերում, մասնավորապես՝ Վայոց Ձորում, Արագածոտնում, Սյունիքում, Շիրակի մարզում (Գյումրիում) և ԼՂՀ-ում:

Ըստ կանխատեսումների՝ ՀՀ առևտրային բանկերը 2008թ. պատրաստվում են հիմնել առնվազն 48 մասնաճյուղ, իսկ 2010թ.՝ 2007թ.-ի նկատմամբ մասնաճյուղերի քանակի աճ է նախատեսվում առնվազն 145-ով:

IV ՆՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2008-2010թթ. համար ՀՀ առևտրային բանկերը նախատեսում են կիրառել հետևյալ նոր ծառայություններն ու տեխնոլոգիաները.

ածանցյալ գործիքներ, այդ թվում՝

- արտարժութային ածանցյալ գործիքներ (սվոպ, օպցիոն, ֆորվարդ),

միջոցների ներգրավման գործառնություններ՝

- նոր ավանդատեսակների ընդունում,
- վարկերի արժեթղթավորում, պարտատոմսերի թողարկում,

վարկավորման գործառնություններ՝

- սինդիկացված վարկերի տրամադրում,
- վարկերի նոր տարատեսակների կիրառում,

ներդրումային գործունեություն՝

- անդեռրայթինգ,
- կորպորատիվ ֆինանսներ,
- ակտիվների կառավարում,
- բրոքերային/դիլերային գործունեություն,
- ուղղակի բաժնեմասնակցային ներդրումներ,
- կառուցվածքային վերակազմավորումներ (միաձուլումներ, ձեքբերումներ և այլն),

վճարահաշվարկային գործառնություններ՝

- Internet Banking, E-Card Banking,
- SMS banking,
- դրամական փոխանցումների նոր համակարգերի ներդրում,
- նոր տեսակի վճարային քարտերի թողարկում,
- չիպային քարտերի սպասարկում,
- «Cash-in» (կանխիկ ընդունող) բանկոմատների տեղադրում:

Բանկերի կողմից նախատեսվում է նաև ներդնել որոշ ծառայություններ և տեխնոլոգիաներ, որոնք թեև արդեն իսկ կիրառվում են ՀՀ ֆինանսական շուկայում, սակայն նորամուծություն են հանդիսանում կոնկրետ բանկերի համար, մասնավորապես.

- դրամական փոխանցումների նոր համակարգերի ներդրում (Western Union, Migom),
- Call կենտրոնի ստեղծում,
- CRM (Customer Relationship Management) համակարգի ստեղծում:

V ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ

2007թ. զարգացումները

Ըստ բանկերի՝ ՀՀ բանկային համակարգին վերջին տարիներին բնութագրական է դարձել ուժեղացող մրցակցային պայքարը, որը հիմնականում պայմանավորված է միջազգայնորեն լայն տարածում ունեցող ֆինանսական կառույցների հայաստանյան ֆինանսական շուկա մուտք գործելու հետ: Ընդ որում, ըստ բանկերի՝ սրվող մրցակցությունն ՀՀ բանկային համակարգի վրա ունենում է ինչպես էական դրական, այնպես էլ բացասական նշանակություն Այսպես, մի կողմից, բանկային համակարգի մրցակցությունը տեղափոխվում է որակապես նոր դաշտ՝ բանկերը ձգտում են մրցակցել հաճախորդների սպասարկման որակի բարձրացման, բարձր պրոֆեսիոնալիզմ ունեցող կադրերի հավաքագրման, արդյունավետ մարքետինգային քաղաքականության և ճկուն կառավարման համակարգերի ներդրման միջոցով՝ միաժամանակ ձգտելով զանազանել առաջարկվող ծառայությունների ցանկը: Միաժամանակ, սրվող մրցակցությունը ստիպում է բանկերին նվազեցնել տոկոսային սփրեդը՝ պահպանելով շահութաբերության անհրաժեշտ մակարդակը, որն էլ բանկերին դրդում է փնտրել ֆինանսավորման նոր, առավել էժան եղանակներ:

Այսպիսով, 2007թ. ՀՀ ֆինանսաբանկային հատվածում տեղ իրադարձություններից բանկերը կարևորել են հետևյալները.

- Ֆինանսաբանկային հատվածում հետզհետե սրվող մրցակցություն.
- Տոկոսադրույքի սփրեդի նվազում.
- Միջազգային հեղինակավոր ֆինանսական կառույցների մուտքը հայաստանյան ֆինանսական շուկա.
- Հաճախորդների սպասարկման կուլտուրայի և որակի բարձրացում՝ մրցակցությանը դիմակայելու համար.
- Բանկային ծառայությունների ցանկի ընդլայնում:

Կոնցենտրացումը պլանավորվող ժամանակահատվածում

(տե՛ս հավելված 7)

ՀՀ բանկային համակարգի կոնցենտրացման ամփոփ ցուցանիշները ներկայացված են Հավելված 7-ում. բանկերի կոնցենտրացումը հաշվարկված է ըստ ակտիվների, վարկային ներդրումների, պետական արժեթղթերի, ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդների ու ցպահանջ միջոցների:

2007թ. նախորդ տարիների համեմատ կոնցենտրացման ցուցանիշներից փոքր-ինչ նվազել են ակտիվների կոնցենտրացման ցուցանիշները՝ ակտիվների մեծությամբ առաջին չորս, յոթ և տասը բանկերի տեսակարար կշիռները ընդհանուր բանկային համակարգի ակտիվներում նվազել են մինչև 4 տոկոսային կետով՝ կազմելով համապատասխանաբար 44%, 64% և 76%:

Վարկային ներդրումների՝ առաջին չորս և յոթ բանկերով կոնցենտրացման ցուցանիշները 2007թ. նախորդ տարվա համեմատ աճել են 3 տոկոսային կետով՝ կազմելով համապատասխանաբար 50% և 71%:

Զգալի նվազել են պետական արժեթղթերի կոնցենտրացման մակարդակը բնութագրող ցուցանիշները. մինչև 10 տոկոսային կետով: Պետական արժեթղթերի կոնցենտրացումը բնութագրող Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը ևս նվազել է, և նախորդ տարվա 0.11-ի փոխարեն 2007թ. կազմել է 0.09:

Կտրուկ նվազել են ֆիզիկական անձանցից ներգրավված ավանդների գծով կոնցենտրացիայի ցուցանիշները. Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը՝ 0.09՝ նախորդ տարվա 0.15-ի համեմատ:

Ցպահանջ պարտավորությունների կոնցենտրացման ցուցանիշները ևս նվազել են. Կոնցենտրացիայի ցուցանիշները նվազել են մինչև 4 տոկոսային կետով, իսկ Հերֆինդալ-Հերշմանի գործակիցը 2007թ. կազմել է 0.11՝ նախորդ տարվա 0.14 ցուցանիշի փոխարեն:

Ըստ բանկերի կանխատեսումների՝ բանկային համակարգի կոնցենտրացման մակարդակը 2008-2010թթ. էականորեն կփոփոխվի հետևյալ ցուցանիշների գծով.

Կնվազեն վարկային ներդրումների կոնցենտրացման ցուցանիշները.

Կնվազեն ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդների կոնցենտրացման ցուցանիշները, ինչպես նաև, ցպահանջ պարտավորությունների կոնցենտրացման ցուցանիշները:

2010թ. վերջում առանձին ոլորտներով կոնցենտրացման մակարդակները առաջին յոթ բանկերի հաշվարկով կկազմի.

- ընդհանուր ակտիվների գծով՝ 62%, ընդ որում մեկ բանկի մասնաբաժինը կկազմի 10%,
- վարկային ներդրումների գծով՝ 64%. մեկ բանկի մասնաբաժինը՝ 2%,
- պետական արժեթղթերի ծավալներով՝ 66%. մեկ բանկի մասնաբաժինը `14%,
- ֆիզիկական անձանց ավանդների գծով՝ 68%. մեկ բանկի մասնաբաժինը `17%,
- իրավաբանական անձանց ավանդների համար՝ 62%. մեկ բանկի մասնաբաժինը՝ 13%,
- ցպահանջ պարտավորությունների շուկայում՝ 68%, մեկ բանկի մասնաբաժինը 18%:

VI ԱՄՓՈՓՈՒՄ

Ըստ 2008-2010թթ. ՀՋԾ-ների՝ բանկերը կանխատեսում են արտաքին միջավայրի և իրենց գործունեության հետևյալ հիմնական զարգացումները.

- ՀՀ տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանում՝ փոքր-ինչ նվազման միտումով,
- ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի կայունացում,
- Ֆինանսական համակարգում մրցակցության ուժեղացում՝ հատկապես օտարերկրյա ինստիտուցիոնալ ներդրողների՝ ՀՀ ֆինանսական շուկա մուտք գործելու պայմաններում,
- Տոկոսադրույքների սփրեդի կրճատում, արդյունքում՝ բանկերի հետագա միտվածություն միջազգային ֆինանսական կառույցներից և օտարեկրյա բանկերից էժան միջոցների ներգրավման.
- Բանկերի կողմից ռիսկերի գնահատման համակարգերի կատարելագործման և կադրային քաղաքականության բարելավման ուղղությամբ գործունեության աշխուժացում:

2008-2010թթ. բանկային համակարգը կտրուկ աճեր չի նախատեսում.

ՀՀ բանկային միջնորդությունը կաճի. 2010թ. ակտիվներ/ՀՆԱ ցուցանիշը կկազմի մոտ 42%՝ 2007թ.-ի 24%-ի համեմատ, իսկ վարկեր/ՀՆԱ ցուցանիշը կկազմի մոտ 26%՝ 2007թ.-ի 13%-ի համեմատ.

- ակտիվների կազմում կպահպանվի վարկերի առաջանցիկ աճը (հիմնականում՝ սպառողական, նաև՝ հիփոթեքային), որի արդյունքում վարկերի տեսակարար կշիռն ակտիվների մեջ կաճի՝ 2010թ. կազմելով 63% (2007թ.՝ 53%).
- պարտավորությունների կազմում ավանդների տեսակարար կշիռը փոքր-ինչ կաճի՝ հասնելով մինչև 70% (2007թ.՝ 67%).
- ավանդների կազմում ցպահանջ ավանդների տեսակարար կշիռը փոքր-ինչ կնվազի՝ 2010թ. կազմելով 52% (31.12.2007թ.-ի 54%).
- բանկային համակարգի կապիտալ/ակտիվներ լևերեջի ցուցանիշը կանխատեսվող տարիներին կնվազի՝ 2010թ. կազմելով 18.5% (2007թ.-ի 21.6%).
- բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները փոքր-ինչ աճել են՝ 2010 թ. ROA-ն կազմելով 3.2%, իսկ ROE-ն՝ 15.4%.
- կանխատեսվող ժամանակաշրջանի վերջում բանկային համակարգի զուտ տոկոսային մարժան կկազմի 5.5% (2007թ.՝ 5.3%):